ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2026 թվականի N 478-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 18-ի 69-Ա որոշումը և Վիգեն Շառյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ք.Ճամբարակի «բնակավայրի բնակելի կառուցապատման» հողերից Հ.Նադարյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող Վիգեն Շառյանի սեփականություն հանդիսացող հողամասին կից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ք.Ճամբարակ Հ. Նադարյան փողոց թիվ 2/2 հասցեի՝ 0.06228 հա հողամասը որպես ընդլայնում ուղղակի վաճառքով օտարել Վիգեն Շառյանին:
2. Սույն որոշման առաջին կետում նշված 0.06228 հա հողամասի վաճառքի գինը կազմում է 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. ապրիլի 20
ք. Ճամբարակ